Ամեն ինչ փոխելու համար

անարխիստական կոչ

ԱՄԵՆ ԻՆՉ ՓՈԽԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Թե կարողանայիր մի բան փոխել, ի՞նչը կփոխեիր: Կուզեի՞ր մնացած կյանքդ առանց աշխատելու լավ ապրել: Թե՞ կվերացնեիր հանածո վառելիքի ազդեցությունը կլիմայի վրա: Գո՞ւցե պահանջեիր արդար բանկեր և քաղաքական գործիչներ: Անկասած, ոչինչ ավելի անիրատեսական չէ, քան ամեն ինչ պահպանել ինչպես որ կա և ակնկալել այլ արդյունք: Անձնական մակարդակում մեր ֆինանսական և հուզական պայքարը արտացոլում է գլոբալ քաոսն ու աղետը: Մենք կարող ենք վատնել մեր ողջ կյանքը, փորձելով մեկ առ մեկ մարել այդ հրդեհները. հրդերներ, որոնց աղբյուրը նույնն է: Ոչ մի մասնակի լուծում չի աշխատի. ամեն ինչ պետք է վերանայել մեկ այլ տրամաբանությամբ:

ՍԿԱՀՐ ԻՆՔՆՈՐՈՇՎԵԼՈՒՑ

Ազատության ուրվականը դեռևս շրջում է իր պատկերով և նմանությամբ ստեղծված աշխարհում: Մեզ խոստացել էին լիիրավ ինքնորոշման իրավունք՝ բոլոր հասարակական կառույցները պարտավոր են հոգալ դրա մասին:

Եթե ունենայիր կատարյալ ինքնորոշում, ի՞նչ կանեիր հենց հիմա: Մտածիր ողջ ներուժիդ մասին՝ ինչ հարաբերություններ կունենայիր, ինչեր կփորձեիր, ինչպես կյանքիդ իմաստ կհաղորդեիր: Երբ նորածին էիր, թվում է՝ չկար որևէ սահմանափակում, ազատ էիր ընտրելու՝ ինչ դառնալ: Քո առջև բաց ճանապարհ էր:

Սովորաբար, մենք չենք մտածում այս մասին: Միայն ամենագեղեցիկ պահերին, երբ սիրահարվում ենք, հասնում երազածին կամ այցելում հեռավոր երկիր, մի ակնթարթ պատկերացնում ենք, թե էլ ինչպիսին կարող էր լինել մեր կյանքը:

Ի՞նչն է խանգարում քեզ օգտագործել ողջ ներուժդ: Ի՞նչ ազդեցություն ունես շրջակա միջավայրիդ վրա կամ ինչպե՞ս ես տնօրինում ազատ ժամանակդ: Բյուրոկրատական համակարգը պարգևատրում է քեզ, երբ հետևում ես հրահանգներին, տնտեսական համակարգը գնահատում է քեզ, երբ շահութաբեր ես, ռազմական համակարգը համոզում է, որ կյանքդ դասավորելու ամենալավ ձևը իրենց հրամանները խելոք կատարելն է: Արդյո՞ք այդ համակարգերը թույլ են տալիս քո նախընտրած ձևերով քաղել կյանքից հնարավորը: Ակնհայտ է, որ բոլորս էլ ունենք կատարյալ ինքնորոշման հնարավորություն, ոչ այն պատճառով չէ, որ այն մեզ տվել են, այլ որովհետև նույնիսկ ամենաբռնապետական համակարգը չի կարող խլել այն մեզնից: Եվ չնայած դրան, երբ սկսում ես գործել շահերիցդ ելնելով, խնդիր ես ունենում նույն կառույցների հետ, որոնք ենթադրաբար պիտի ապահովեին քո ազատությունը:

ՍԿՍԻՐ ԻՆՔԴ ՔԵԶ ՊԱՏԱՍԽԱՆ ՏԱԼՈՒՑ



Ղեկավարները և պետական ծառայողները սիրում են խոսել անձնական պատասխանատվությունից: Բայց եթե մենք ամբողջությամբ պատասխանատու լինեինք մեր բոլոր գործողությունների համար, արդյո՞ք ի սկզբանե կհետևեինք նրանց հրահանգներին: Պատմության ընթացքում հնազանդությունը շատ ավելի վնաս է հասցրել, քան չարակամությունը: Եթե մենք իրար հետ հաշվի նստեինք, մարդկության կուտակած ահռելի զինանոցի կարիքը չէր լինի: Եթե չես ուզում պատերազմների, ցեղասպանության կամ ճնշումների մաս կազմել, ապա նախ և առաջ պիտի հրաժարվես հրամաններ կատարել:

Նույնը կարելի է ասել քո արժեքների մասին: Անհամար ղեկավարներ և կանոնագրքեր պահանջում են քեզանից հլու-հնազանդություն: Բայց թե անգամ որոշումներիդ պատասխանատվությունը դնելու լինես մեկ ուրիշի ուսերին, լինի աստծված թե դոգմա, ինչպե՞ս ես որոշելու, թե հատկապես որ մեկի: Ուզես թե չուզես, բայց պիտի ընտրես դրանցից մեկը: Սովորաբար, մարդիկ պարզապես ընտրում են առավել ծանոթ կամ հարմար տարբերակը:

Մենք անխուսափելիորեն պատասխանատու ենք մեր համոզմունքների և որոշումների համար: Երբ հրամանատարների և պատվիրանների փոխարեն հաշիվ ենք տալիս ինքներս մեզ, միևնույն է կարող ենք տարաձայնություններ ունենալ, բայց դրանով իսկ գործում ենք սեփական ցանկության համաձայն և ուրիշների օրակարգի մաս չենք կազմում:

ՍԿՍԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՐԵՆ ՈՒԺ ՈՐՈՆԵԼՈՒՑ

Աշխատանք կատարողներն ունեն ուժ, իսկ ղեկավարները, ովքեր ասում են, թե ինչ անել՝ իշխանություն: Բնակիչները, ովքեր հոգ են տանում շենքի մասին, ունեն ուժ, իսկ սեփականատերը, ում պատկանում է շենքը՝ իշխանություն: Զինվորներն ունեն ուժ, իսկ հրամանատարները՝ իշխանություն:

Ուժն ինքնին ճնշող չէ: Ուժի շատ տեսակներ ազատագրող են, օրինակ, ուժ սիրելիների մասին հոգ տանելու, ուժ ինքդ քեզ պաշտպանելու և վեճեր լուծելու, ուժ երազանքներ իրականացնելու և «տարօրինակ» բաներով զբաղվելու:

Կան կարողությունները զարգացնելու ձևեր, որոնք, նպաստում են այլոց ազատագրմանը: Ամեն մեկը, ով օգտագործում է իր ողջ ներուժը, ինչ՝որ առումով նվեր է անում բոլորին:

Մյուս կողմից, ինչ-որ մեկի վրա իշխելով, խլում ես նրա ուժը: Եվ այն, ինչ յուրացրել ես, մեկ ուրիշն էլ կխլի քեզնից: Իշխանությունը միշտ ծագում է հետևյալ կերպ՝

- զինվորը ենթարկվում է գեներալին, ով պատասխանատու է նախագահի առաջ, իսկ վերջինիս իշխանությունը գալիս է Սահմանադրությունից

- քահանան պատասխանատու է եպիսկոպոսի առաջ, եպիսկոպոսը՝ կաթողիկոսի, որն էլ իր հերթին իշխանություն է ստանում Աստծուց

- աշխատողը պատասխանատու է սեփականատիրոջ առաջ, ով ծառայում է սպառողին, վերջինիս իշխանությունն էլ հաստատվում է փողի միջոցով

- ոստիկանը կատարում է դատավորի հրամանը, դատավորի իշխանությունն էլ օրենքն է:

Հայրիշխանության և սեփականության բուրգի գագաթին որևէ մեկին չես գտնի, դրանք պարզապես սոցիալական կոնստրուկտներ են՝ մարդկությանը հիփնոզացնող ուրվականներ:

Մեր հասարակության մեջ ուժն ու իշխանությունն այնքան փոխկապված են, որ հազիվ ենք դրանք իրարից տարբերում: Մենք ուժ ենք ստանում միայն երբ հնազանդվում ենք ինչ-որ իշխողի: Եվ չնայած դրան՝ առանց ազատության, ուժն ոչ մի գրոշ չարժե:

ՍԿՍԻՐ ՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

Ի տարբերություն իշխանության՝ ուժը կենտրոնանում է այն մարդկանց ձեռքում, ովքեր վստահություն են ներշնչում: Անհատը, ով վստահություն է վայելում, իշխանության կարիք չունի: Եթե ինչ-որ մեկին չենք վստահում, ապա ինչպե՞ս ենք կարող օժտել նրան իշխանությամբ: Եվ չնայած դրան՝ ում ենք մենք վստահում ավելի քիչ, քան քաղաքական գործիչներին և օլիգարխներին:

Պարտադրված իշխանության բացակայության պայմաններում մարդիկ մոտիվացված են փոխշահավետ լուծումներ գտնել՝ շահելով միմյանց վստահությունը: Հիերարխիան վերացնում է այս մոտիվացիան, թույլ տալով իշխանություն ունեցողներին ճնշել անհամաձայնությունները:

Իր լավագույն դրսևորման մեջ ընկերությունը հարաբերություն է հավասարների միջև, ովքեր օգնում և աջակցում են իրար՝ միաժամանակ հարգելով միմյանց անկախությունը: Դա մեր բոլոր հարաբերությունները գնահատելու լավ չափանիշ է: Առանց պարտադրված սահմանափակումների, ինչպիսիք են սահմանները, սեփականությունը և պարտքը, խոշոր ձեռնարկատիրություններին և եկեղեցուն, բանակին և ոստիկանությանը տրված արտոնությունները, մենք կարող էինք վերակառուցել մեր հարաբերությունները՝ հիմնվելով փոխշահավետության և փոխօգնության գաղափարի վրա:

ՍԿՍԻՐ ԱՆՁՆԱԿԱՆԻ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐԻ ՀԱՇՏԵՑՈՒՄԻՑ

«Քո իրավունքը վերջանում է այնտեղ, որտեղ սկսվում է ուրիշի իրավունքը»: Այդ տրամաբանության համաձայն՝ ինչքան շատ մարդ, այնքան քիչ ազատություն:

Բայց ազատությունը անհատի իրավունքների նեղ շրջանակ չէ: Այդքան էլ հեշտ չի տարանջատել մարդկանց իրարից: Հորանջն ու ծիծաղը վարակիչ են, ճիշտ այնպես, ինչպես ոգևորությունն ու հուսահատությունը: Ես կազմված եմ այն կլիշեներից, որոնք մեր լեզվի մեջ են, երգերից, որոնք գլխիս մեջ են, տրամադրություններից, որոնցով վարակում են ինձ ընկերներս: Երբ ես մեքենա եմ վարում, այն աղտոտում է օդը, որը դու շնչում ես, երբ հանքարդյունաբերական կոմբինատը թափոններով է լցնում գետը, դրանք աղտոտում են ջուրը, որը խմում ենք բոլորս: Եթե բոլորը ընդունում են համակարգը՝ դու ստիպված ես ենթարկվել դրան: Բայց երբ մարդիկ մարտահրավեր են նետում այդ համակարգին, քեզ հնարավորություն է ընձեռնվում վերափոխելու իրականությունդ: Քո ազատությունը սկսում և վերջանում է այնտեղ, որտեղ իմը:

Մենք փոխկապակցված ենք: Մեր մարմինները բաղկացած են սիմբիոզի մեջ ապրող հազարավոր տարբեր կենդանի օրգանիզմներից: Դրանք ոչ թե առանձին կղզյակներ են, այլ շարունակական գործընթացի մաս, որում սնուցիչներն ու մանրէները անընդհատ շրջանառվում են: Գայլերի ոհմակների գզվռտոցը կամ գորտերի կռկռոցը նույնքան միասնական են և նույնքան էլ անհատական, որքան մեր մարմինները: Մենք չենք գործում վակուումի մեջ, զուտ բանականությամբ առաջնորդվելով, այլ կա որոշակի տիեզերական շարժում և մենք այդ շարժման մաս ենք:

Լեզուն շարունակում է հաղորդակցության միջոց ծառայել զուտ այն պատճառով, որ ընդհանուր է: Նույն տրամաբանությունը ճիշտ է գաղափարների և ցանկությունների դեպքում - մենք կարող ենք դրանք

հաղորդել այն պատճառով, որ դրանք ավելին են, քան մեզնից յուրաքանչյուրը: Ամեն մեկս կազմված է հակադիր ուժերի քաոսից, որոնք մեզանից դուրս են և մեզանից անկախ ծավալվում են ժամանակի ու տարածության մեջ: Մենք որոշում ենք՝ ինչ հատկանիշ դիմացինին փոխանցել, երբ զարգացնում ենք մեր մեջ նույն հատկանիշը:

Ազատությունը ունեցվածք կամ սեփականություն չէ, այն հարաբերությունների ձև է: Խնդիրը արտաքին աշխարհից պաշտպանվելը չէ, այլ այնպիսի հարաբերություններ ձևավորելը, որոնք մեզ կընձեռեն առավելագույն հնարավորություններ: Դա չի նշանակում, որ պետք է ամենուր փնտրենք փոխհամաձայնություն հանուն փոխհամաձայնության: Թե՞ կոնֆլիկտները և թե՞ համաձայնությունները կարող են ազնվացնել և փոխել մեզ, քանի դեռ որևէ կենտրոնացած ուժ չի պարտադրում համաձայնություն կամ բաժանում մարդկանց հաղթող - պարտվող կողմերի: Աշխարհը մասերի բաժանելու փոխարեն եկեք հնարավորինս օգուտ քաղենք մեր փոխկապվածությունից:

ՍԿՍԻՐ ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԻՑ

Ծնվելով ու ապրելով այս հասարակության մեջ՝ մենք զրկված ենք նույնիսկ սեփական ցանկություններից: Դրանք մշակվում են գովազդի և քարոզչության այլ ձևերի միջոցով՝ շուկայական վազքուղու վրա մեզ պահելու համար: Քարոզչության շնորհիվ մարդկանց գուցե թվա, որ հաճույք են ստանում մի բանից, որը սակայն հետագայում դժբախտացնելու է իրենց: Մենք կարծես կողպված ենք մեր տառապանքի մեջ, իսկ հաճույքները, կարծես, փականի դրոշմակնիքը լինեն:

Իսկապես ազատ լինելու համար պետք է լծակներ ունենալ մեր ցանկությունները ստեղծող գործընթացների վրա: Ազատագրվել, ոչ միայն նշանակում է մեր ցանկությունները բավարարել, այլ նաև ընդլայնել հնարավորի մեր սահմանը, որ մեր ցանկությունները կարողանան փոփոխվել իրականությանը համապատասխան: Դա նշանակում է մերժել այնպիսի հաճույքները, որը ստանում ենք հարկադրելուց, տիրելուց կամ իշխելուց - փոխարենը ձգտել հաճույքի, որն ազատում է մեզ հնազանդության և մրցակցության կապանքներից: Եթե երբևէ հրաժարվել եք որևէ կախվածություն, ապա համտեսել եք ցանկությունների վերափոխման համը:

ՍԿՍԻՐ ԱՊՍՏԱՄԲԵԼՈՒՅ

Մոլեռանդները սովոր են համընդհանուր խնդրի մեջ մեղադրել որևէ առանձին խմբի - հրեաներին՝ շահամոլ կապիտալիզմի, ներգաղթյալներին՝ տնտեսական անկման մեջ - ճիշտ այնպես, ինչպես մարդիկ մեղադրում են առանձին քաղաքական գործիչներին համակարգի փչացած լինելու մեջ: Բայց խնդիրը հենց համակարգն է: Անկախ նրանից, թե ում ձեռքում է կառավարման ղեկը, համակարգը ծնում է թե ուժի անհավասարություն և թե մանր ստորություններ: Խնդիրը այն չէ, որ այս համակարգը խափանված է, այլ այն, որ ի սկզբանե գոյություն ունի:

Մեր թշնամիները մարդիկ չեն, այլ այն հաստատությունները և սովորությունները, որոնք օտարում են մեզ իրարից և ինքներս մեզնից:

Գերիշխանությանը վերջ տալու լավագույն միջոցը ոչ թե այն ավելի արդար դարձնելն է, ոչ թե դիրքորոշումները փոխելը կամ համակարգը բարեփոխելն է, այլ՝ սեփական ուժերով հանդես գալն է: Սա պատերազմ կամ հակամարտություն չէ, այլ անհնազանդության կոչ:

Կրթելը և քննարկումներ կազմակերպելը բավարար չեն մարդկանց սրտերում փոփոխություն բերելու համար:

Քանի դեռ գաղափարները մնում են միայն խոսակցության մակարդակում և չեն ազդում մեր որոշումների վրա, խոսակցությունը վերացական է:

Մարդկանց մեծ մասը հակված է հեռու մնալ տեսական քննարկումներից, սակայն երբ ինչ-որ կարևոր բան է տեղի ունենում, երբ ակնհայտ երևում են հակադիր կողմերի էական տարբերությունները, մարդիկ դրանցից որևէ մեկի կողմն են բռնում: Մեզ



պետք չէ ոչ բացարձակ նույնակարծություն, ոչ աշխարհի մասին լիարժեք պատկերացում և ոչ էլ գործողությունների ճանապարհային քարտեզ: Մեզ պարզապես անհրաժեշտ է մեկ այլ ուղու վրա ոտք դնելու քաջություն:



ԽՆԴԻՐԸ ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ Է

Որո՞նք են բռնություն ենթադրող հարաբերությունների նշանները: Բռնություն կիրառողը փորձում է կառավարել քո վարքագիծը կամ մտքեր թելադրել, արգելափակել ռեսուրսների հասանելիությունը, սպառնալ կամ բռնություն գործադրել կամ պահել քեզ մշտական վերահսկողության մեջ:

Սա անհատ ճնշողների վարքագիծն է, սակայն նույնը ճիշտ է նաև ԱԱԾ-ի, հարկային ծառայության և մեր հասարակությունը կառավարող այլ հաստատությունների դեպքում:

Գործնականում դրանք բոլորը հիմնված են այն գաղափարի վրա, որ մարդկանց պետք է կառավարել, ղեկավարել, վերահսկել:

Որքանմեծէմեզպարտադրվողանհավասարությունը, այնքան ավելի շատ վերահսկողություն է պահանջվում այն պահպանելու համար:

Մի կողմից կառավարումն իրականացվում է անհատական մակարդակում՝ տուգանքների, հատուկ ջոկատայինների և բանտերի միջոցով, մյուս կողմից այն ամենուր է և անտեսանելի՝ միահյուսված հասարակության ենթակառուցվածքում՝ վարկային և ապահովագրական քաղաքականության, պարտադիր զինծառայության և սոց-ցանցերի մեջ:

Ազգային անվտանգությունը վերահսկում է՝ ինչ ենք անում օնլայն, բայց մենք ավելի շատ կառավարվում ենք ալգորիթմներով, որոնք որոշում են, թե ինչ ենք տեսնում համացանց մուտք գործելիս:

Երբ կատարելագործվի կառավարման ապարատը և մեզ մատուցվող պատրանքներն առավել իրական թվան, այլևս չի լինի որևէ բախում մեր համակարգի և մեր պատկերացրած կյանքի միջև, ոչ այն պատճառով, որ հասել ենք տոտալ ազատության, այլ որովհետև կատարելագործվել է դրա ճիշտ հակառակը:

Ազատությունը ոչ թե առաջարկվող տարբերակների միջև ընտրությունն է, այլ դրանց ձևակերպումը:

ԽՆԴԻՐԸ ՀԻԵՐԱՐԽԻԱՆ Է

Անհավասարությունը պարտադրելու շատ տարբեր մեխանիզմներ կան: Որոշները կախված են կենտրոնացված ապարատից, ինչպիսին է դատական համակարգը: Մյուսները գործում են ոչ ֆորմալ կերպով, ինչպես օրինակ «լավ տղերքի թայֆաները» կամ գենդերային դերերը:

Որոշ մեխանիզմներ գրեթե ամբողջությամբ վարկաբեկված են. քչերն են դեռ հավատում թագավորների աստվածային իրավունքին, թեև դարեր շարունակ հասարակության կառավարման ոչ մի այլ իրավունք նույնիսկ պատկերացնել հնարավոր չէր:

Մյուսները դեռ այնքան խորն են արմատացած, որ առանց դրանց կյանքը չենք պատկերացնում. ո՞վ կարող է պատկերացնել աշխարհն առանց սեփականության իրավունքի: Եվ չնայած դրան՝ դրանք սոցիալական կոնստրուկտներ են.դրանք գոյություն ունեն, բայց կարող են և չլինել: Օլիգարխների և գործադիր տնօրենների առկայությունը նույնքան անբնական և անպետք է, որքան թագավորների գոյությունը:

Այս մեխանիզմները զարգացել են միաժամանակ և միմյանց ամրապնդելով: Օրինակ, ռասիզմի պատմությունն անբաժանելի է կապիտալիզմի պատմությունից: Դրանք երկուսն էլ անհնար է պատկերացնել առանց գաղութացման, ստրկության և խտրականության: Նույն կերպով առանց պետական ենթակառուցվածքի և հասարակության այլ հիերարխիաների, մի խումբ մոլեռանդներ երբեք չէին կարողանա պարտադրել տղամարդկանց սիստեմատիկ գերակայությունը:

Այլ կերպ ասած հիերարխիկ հասարակության մեջ ում է ճնշելու ոստիկանությունը, ովքեր պիտի հայտնվեն բանտերում, ովքեր կլինեն չքավոր: Միամիտ է հավատալ, որ հիերարխիայի վրա հիմնված հասարակության մեջ ապրելով կհասնենք հավասարության: Ինչքան էլ խառնես խաղաքարտերը, արդյունքը նույնն է: Բուրգի գագաթին տեղերը սահմանափակ են - մեծամասնությունը կմնա չքավոր, դիմադրողները կընկնեն ոստիկանության մահակի տակ, համարձակները կփակվեն բանտերում:

ԽՆԴԻՐԸ ՍԱՀՄԱՆՆԵՐՆ ԵՆ

Եթե այլ երկրի բանակը գրավեր այս երկիրը, կտրեր ծառերը, թունավորեր գետերը և երեխաներին վարժեցներ հնազանդության, ո՞վ զենք չէր վերցնի նրանց դեմ: Բայց երբ սեփական իշխանություններն են նույն կերպ վարվում, հայրենասերները պատրաստակամորեն սկուտեղի վրա մատուցում են իրենց հնազանդությունը, հարկային դրամները և երեխաներին: Իրականում սահմանները ոչ թե պաշտպանում, այլ բաժանում են մեզ՝ ստեղծելով ավելորդ լարվածություն սահմանից այն կողմ գտնվող մարդկանց հետ և կոծկելով իրական հակասությունները երկրի ներսում մնացածների միջև:

Նույնիսկ ամենաժողովրդավարական կառավարությունը հիմնված է յուրայինների և օտարների բաժանման վրա:

Հին Աթենքում, որը հայտնի է իբրև ժողովրդավարության ծննդավայր, տղամարդկանց ընդամենը մի փոքր խումբ իրավունք ուներ քաղաքական գործընթացի մաս կազմել: Այսօրվա ժողովրդավար Միացյալ Նահանգների հիմնադիր հայրերը ստրկատերեր են եղել: Մինչ այսօր ԱՄՆ-ում քաղաքացիության ինստիտուտը զրկում է միլիոնավոր անօրինական ներգաղթյալներին իրենց կյանքը կառավարելու հնարավորությունից:

Կատարյալ լիբերալ համակարգը ենթադրում է ներգրավման սահմանների աստիճանաբար ընդլայնում, ընդհուպ մինչև ամբողջ աշխարհին ինտեգրվի մի մեծ ժողովրդավարական նախագծի մեջ: Բայց անհավասարությունը ներդրված է հենց կառուցվածքի մեջ:

Մեր հասարակության բոլոր մակարդակներում կան նաև հազարավոր փոքրիկ սահմաններ, որոնք բաժանում են մեզ հզորների և անզորների անվտանգության անցակետերը, վարկային քաղաքականությունը, էլիտար թաղամասերը և այլն: Մեզ պետք են պատկանելության այնպիսի մոդելներ, որոնք հիմնված չեն լոկ բացառումի վրա, չեն կենտրոնացնում իշխանությունը և լեգիտիմությունը, չեն սահմանափակում կարեկցանքը որևէ փակ համայնքով:

ԽՆԴԻՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆ Է

Դու ուժ ունես, միայն երբ կիրառում ես այն, ճիշտ այնպես, ինչպես բացահայտում ես հետաքրքրություններդ՝ միայն դրանց հետևելով: Երբ որևէ լծակ գործադրելու ամեն փորձ պետք է արվի ներկայացուցիչների կամ հաստատությունների միջնորդությամբ, մենք օտարվում ենք իրարից և սեփական ներուժից: Մեր կարողությունները մեզ անճանաչելի ու օտար են դառնում:

Մեզ միշտ հիասթափեցնող քաղաքական գործիչների օրինակն ակնհայտ ցույց է տալիս, թե որքան ուժ ենք մենք հանձնել իրենց, մեր վրա իշխելու և դրանով սեփական կյանքի հնարավոր փոփոխությունը կապել ենք նրանց հետ:

Մեր շրջապատում կատարվածի հանդեպ պատասխանատվությունից խուսափելու հետևանքով է, որ հնարավոր է դառնում ոստիկանական բռնությունը:

Թվային տեխնոլոգիաների դարաշրջանում, երբ ամեն մարդ շարունակաբար կերտում է իր հանրային կերպարը, որը վամպիրի նման խմում է մեր արյունը: Եթե մենք իրարից մեկուսացած չլինեինք, եթե չմրցեինք մասնագիտական և հասարակական ոլորտներում, արդյո՞ք այդքան ժամանակ և էներգիա կներդնեինք սոցցանցերի պրոֆիլների մեջ և մեր սեփական պատկերով կուռքեր կստեղծեինք:

Մեզ հնարավոր չէ ներկայացնել: Ոչ պատգամավորները, ոչ էլ աբստրակտ գաղափարները չեն կարող մեզ ներկայացնել: Մարդկանց վերածելով ժողովրդագրական տվյալների, իսկ կյանքի փորձը՝ նիշերի, մենք կորցնում ենք այն ամենն, ինչ թանկ ու եզակի է աշխարհում: Մեզ պետք է ներկայություն, անմիջականություն, շփում միմյանց հետ, մեր կյանքի ուղղակի վերահսկողություն, բաներ, որոնք ոչ մի ներկայացուցիչ կամ ներկայացչություն չի կարող մեզ տալ:

ԽՆԴԻՐԸ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐՆ ԵՆ

Առաջնորդությունը հասարակական հիվանդություն է, որի ժամանակ խմբի մասնակիցների մեծամասնությունը ի վիճակի չէ նախաձեռնությամբ հանդես գալ և քննադատաբար գնահատել սեփական գործողությունները: Քանի դեռ մենք գործելու իրավունքը տալիս ենք կոնկրետ անձանց, հույս չդնելով մեր կողքին կանգնածների աջակցության վրա, մենք միշտ կախվածության մեջ ենք լինելու մեր առաջնորդների մեծահոգությունից: Նույնիսկ, երբ նրանք բարի ու ազնիվ են, պակաս վտանգավոր չեն, քան բացահայտ բռնապետները: Իրենց վեհանձնությունը միայն ամրապնդում է մյուսների ենթարկյալ դերը, ինչպես նաև առաջնորդության լեգիտիմությունը:

Բողոքի ակցիայի վայր եկած ոստիկանները միևնույն հարցն են տալիս՝ ո՞վ է ձեր գլխավորը: Պատճառն այն չէ, որ կոլեկտիվ գործողության համար առաջնորդ է անհրաժեշտ, այլ այն, որ առաջնորդությունը շարժումը խոցելի է դարձնում: Կոնկիստադորները նույն հարցը տվեցին, երբ եկան այսպես կոչված «Նոր աշխարհ»: Երբ նրանք ստանում էին «Ո՞վ է գլխավորը» հարցի պատասխանը, բնիկների հնազանդեցման գործը կրճատվում էր դարերով: Քանի դեռ կա առաջնորդ, նրան կարելի է փոխարինել, կաշառել, պատանդ վերցնել: Լավագույն դեպքում առաջնորդներից կախվածությունը հասարակության Աքիլեսյան գարշապարն է: Վատագույն դեպքում առաջնորդությունը վերարտադրում է իշխանությունների շահերը և իշխանության բուրգը: Ավելի լավ տարբերակ է, երբ յուրաքանչյուրը սեփական օրակարգն ունի և պատասխանատվություն է կրում իր գործողությունների համար:

ԽՆԴԻՐԸ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆ Է

Կառավարությունը խոստանում է իրավունքներ, մինչդեռ միայն կարող է զրկել մեզ ազատություններից: Իրավունքի գաղափարը ենթադրում է կենտրոնացված իշխանության գոյություն, որը նախ կտրամադրի, ապա կպաշտպանի մեր իրավունքները: Սակայն եթե պետությունը բավարար չափով հզորություն ունի որևէ իրավունք երաշխավորելու, ապա այն նույնչափ էլ իշխանություն ունի մեզ այդ նույն իրավունքից զրկելու: Երբ մենք որևէ խնդիր լուծելու նպատակով հզորացնում ենք կառավարությունը, ապա դրանով դուռ ենք բացում ավելի շատ խնդիրների առաջ: Կառավարությունն օդից չէ իշխանություն ձեռք բերում, դա մեր իշխանությունն է, որը տալիս ենք, որը շատ ավելի արդյունավետ կկիրառեինք առանց ներկայացուցչական մոդելի:

Ամենալիբերալ ժողովրդավարությունը հիմնված է նույն սկզբունքի վրա, ինչ ամենաբռնապետական անձնիշխանությունը. իշխանության և լեգիտիմության կենտրոնացում մի կառույցի մեջ, որը նախատեսված է ուժի կիրառումը մոնոպոլիզացնելու համար:

Էական չէ, թե ում են ծառայում չինովնիկները՝ թագավորի, նախագահի, թե ընտրազանգվածի: Օրենքները, բյուրոկրատիան և ոստիկանությունը ավելի հին են, քան ժողովրդավարությունը, նրանք գործում են նույն կերպ թե՛ ժողովրդավարական, թե՛ բռնապետական համակարգում: Միակ տարբերությունն այն է, որ մենք ընտրում ենք՝ ով է մեզ կառավարելու, և պիտի ընդունեն, թե այդ մարդիկ մեր ընտրությունն են, նույնիսկ, երբ նրանք գործում են մեր դեմ:

Բռնապետություններն իրենց բնույթով անկայուն են: Նույնիսկ եթե սպանեն և բանտարկեն մի ամբողջ սերունդ, միևնույն է նրանց երեխաները նորից կհորինեն ազատության գաղափարը: Բայց երբ ամեն մեկին

հնարավորություն ես խոստանում պարտադրել իր կամքը մեծամասնության անունից, ստանում ես մի համակարգ, որը մարդկանց իրար դեմ է լարում:

Որքան շատ թվացյալ ազդեցություն ունեն մարդիկ պետության հարկադրական կառույցների վրա, այդքան ավելի սիրված են այդ կառույցները: Թերևս սա բացատրում է, թե ինչպես է, որ ժողովրդավարության համաշխարհային ընդլայնմանը զուգահեռ, խորանում ռեսուրսների և իշխանության անհավասար բաշխումը: Ոչ մի այլ պետական համակարգ ի վիճակի չէր լինի կայունացնել նման վտանգավոր իրավիճակ:

Երբ իշխանությունը կենտրոնացված է, սեփական ճակատագրերի տեր զգալու համար, մարդիկ ստիպված են իշխել ուրիշներին: Ինքնավարության ձգտումը վերածվում է քաղաքական իշխանության համար մղվող պայքարի: Դրա ապացույցն են հետգաղութային երկրների ժողովուրդների միջև քաղաքացիական պատերազմները, ժողովուրդներ, որոնք նախկինում խաղաղ գոյակցել են:

Իշխողներն իրենց կարգավիճակը կարող են պահել միայն հավերժ պատերազմ մղելով ինչպես օտար այնպես էլ սեփական ժողովուրդների դեմ: 2008 թվին սահմանը պաշտպանող բանակը բերվել էր Երևան:

Եթե կա հիերարխիա, ապա վերևներին ձեռնտու է իշխանությունը կենտրոնացնել: Համակարգում հակակշիռներ ավելացնելը նշանակում է պաշտպանվածություն ակնկալել մեկ այլ կառույցից, որից իրականում պետք է պաշտպանվել: Իշխանությունների վրա լծակներ գործադրելու միակ ճանապարհն, առանց իրենց խաղի մաս կազմելու, ինքնավար հորիզոնական ցանցերի զարգացումն է: Երբ մենք այնքան հզոր կլինենք, որ կստիպենք իշխանություններին մեզ լուրջ վերաբերվել, այդժամ իսկ մենք ի վիճակի կլինենք առանց նրանց օգնության լուծելու մեր խնդիրները:

ԽՆԴԻՐԸ ՇԱՀՈՒՅԹՆ Է

Փողը կատարյալ մեխանիզմ է անհավասարությունը գործի դնելու համար: Այն վերացական է, և թվում է՝ կարող է փոխարինել ամեն ինչի: Այն ունիվերսալ է, մարդիկ, ովքեր ուրիշ ոչ մի ընդհանրություն չունեն, այնուամենայնիվ ընդունում են փողն իբրև իրական փաստ: Այն անդեմ է և, ի տարբերություն ժառանգության, կարող է ակնթարթորեն փոխանցվել մեկ անձից մյուսին: Բռնապետության դեմ ընդվզողներից շատերը պատրաստակամորեն ընդունում են շուկայի թելադրանքը:

Երբ բոլոր արժեքները խտացված են մի գործիքի մեջ, կյանքի նույնիսկ անդառնալի պահերը զրկվում են իմաստից: Այն ամենը, ինչ հնարավոր չէ փողի վերածել, դուրս է մնում կյանքից: Կյանքը դառնում է պայքար ֆինանսական շահի համար, յուրաքանչյուրը բոլորի դեմ, վաճառիր կամ վաճառվիր:

Շահույթ ստանալ նշանակում է այլ մարդկանց համեմատ ռեսուրսների ավելի մեծ բաժին վերահսկել: Չենք կարող բոլորով միաժամանակ շահույթ ունենալ, որպեսզի մեկը շահույթ ստանա, մյուսները պետք է կորցնեն որոշ լծակներ: Որքան ավելի շատ են մարդիկ աշխատում, այդքան ավելի է մեծանում նրանց ու գործատուների միջև ֆինանսական ճեղքվածքը:

Շահույթ հետապնդող համակարգը կուտակում է հարստություն, և միաժամանակ ծնում է աղքատություն: Մրցակցության հետևանքով շուկայում նորարարությունները հայտնվում են ավելի արագ, քան երբևէ, սակայն դրան զուգահեռ աճում է անհավասարությունը:

Եվ քանի որ բոլորն էլ ուզում են շահույթ ստանալ, այլ ոչ թե զուտ ծրագրեր իրագործել, արդյունքները աղետալի են: Կլիմայի փոփոխությունն այս աղետներից վերջինն է, և նույնիսկ ամենահզոր կապիտալիստներն անզոր են կասեցնել այն: Եվ իսկապես, կապիտալիզմը դրդում է գործարարներին ոչ թե ճգնաժամեր կասեցնել, այլ շահարկել դրանք:

ԽՆԴԻՐԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ Է

Կապիտալիզմի հիմքը սեփականության իրավունքն է, որը թագավորներից ու արիստոկրատներից ժառանգած մեկ այլ սոցիալական կոնստրուկտ է: Սեփականությունն այսօր ձեռքից ձեռք է անցնում ավելի արագ, քան նախկինում, սակայն հիմնական միտքը նույնն է: Սեփականաշնոհման գաղափարը լեգիտիմացնում է բռնության կիրառումը՝ ռեսուրսների արհեստական անհավասար բաշխում ստեղծելու համար:

Որոշ մարդկանց պատկերացմամբ սեփականությունը կարող է գոյություն ունենալ առանց պետության: Բայց սեփականության իրավունքն չի աշխատում առանց դա պարտադրող կենտրոնացված իշխանության: Միաժամանակ քանի դեռ կա կենտրոնացված մարմին, ոչինչ իսկապես քոնը չէ:

Քո աշխատած փողը բռնագրավվում է պետության կողմից, այն ենթակա է հարկման և գնաճի: Քո տունը քեզ չի պատկանում, այն բանկինն է, որը քեզ տվել է հիփոթեքային վարկ: Նույնիսկ երբ տունը քոնն է, դու պարտավոր ես վաճառել այն կառավարությանը, եթե վերջինս, օրինակ, ճանաչի այն գերակա շահ:

Կարևոր բաները պաշտպանելու համար ի՞նչ է մեզ անհրաժեշտ: Կառավարությունը գոյություն ունի միայն մեր տվածի շնորհիվ, այն միշտ ավելի շատ կվերցնի, քան կտա: Շուկայական համակարգը քաջալերում է մարդկանց իրարից հնարավորինս շատ շորթել: Միակ վստահելի օղակը մեր հասարակական կապերն են: Եթե ուզում ենք վստահ լինել, որ անվտանգ ենք, ապա, պետք է ունենանք փոխօգնության ցանցեր, որոնցով կպաշտպանենք մեզ:

Առանց փողի կամ սեփականության իրավունքի մեր վերաբերմունքը առարկաներին պայմանավորված կլինի մեր՝ իրար հետ ունեցած հարաբերություններով: Այսօր ճիշտ հակառակն է, իրար հետ մեր հարաբերությունները պայմանավորված են առարկաների հանդեպ մեր վերաբերմունքով: Սեփականությունից հրաժարվելը չի նշանակում, որ դու կորցնում ես ունեցածդ: Այն նշանակում է, որ ոչ մի ոստիկան կամ ֆինանսական ճնաժամ չիկարողանա զրկել քեզ կյանքի համար անհրաժեշտ պայմաններից: Բյուրոկրատիայի փոխարեն մենք կկարևորենք մարդկային կարիքները, իրար շահագործելու փոխարեն, մենք հետամուտ կլինենք փոխշահավետ համագործակցության: Առանց սեփականության հասարակության մեջ ամեն մեկը կարժանանա հարգանքի այն չափի, որը վաստակել է, և ոմանց դա կարող է վախեցնել: Առանց փողի մարդկանց արժեքը որոշվում է ուրիշներին օգնելու պատրաստակամությամբ, այլ ոչ թե ուրիշներին կաշառելով:

Այս պայմաններում գործելիս չենք մտածում շահույթի մասին: Արդյունքում անհիմաստ կամ կործանարար գործունեության խթան պարզապես չկա: Մենք ունենք այն, ինչ իրականում կարևոր է մեզ համար՝ կիրք, ընկերություն, մեծահոգություն: Մեծ թվով ոստիկաններ են անհրաժեշտ ռեսուրսների անհավասար բաշխումը պարտադրելու և մեզ մրցակցության ծուղակը գցելու համար:

ՎԵՐՋԻՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Յուրաքանչյուր կարգ հաստատվում է հանցագործությամբ, որը լուծարում է նախորդ կարգը: Այնուհետև, նոր կարգը սկսում է ընկալվել որպես լեգիտիմ, քանի որ մարդկանց համար այն դառնում է սովորական: ԱՄՆ-ի «հիմնադիր» հանցագործությունը Անգլիայի թագավորի իշխանության դեմ ապստամբությունն էր: Գալիք սերունդների «հիմնադիր» հանցագործությունը, կլինի ապստամբել այսօրվա օրենքների և հաստատությունների դեմ: Հանցագործության գաղափարը ներառում է ամեն բան, ինչ դուրս է հասարակական նորմերից՝ թե ամենավատ, թե ամենալավ դրսևորումներով: Այն ամենը, ինչ համակարգը չի կարողանում վերահսկել, վտանգավոր է իր համար: Ամեն հասարակարգի ներսում կան սեփական կործանման սերմերը:

Ոչինչ հավերժ չէ, սա ճիշտ է նաև կայսրությունների և հասարակարգերի համար: Բայց ի՞նչ կարող է փոխարինել այս հասարակարգը: Կարո՞ղ ենք պատկերացնել մի կարգ, որը հիմնված չէ լեգիտիմ և ոչ լեգիտիմ, օրինական և հանցավոր, տեր ու հնազանդ բաժանման վրա: Ո՞րը կլինի այդ վերջին հանցագործությունը:

ԱՆԱՐԽԻԱՆ այն է, երբ կարգը չի պարտադրվում ուժով: Անարխիան ինքներս մեզ և մեր հարաբերությունները շարունակաբար բացահայտելու ազատությունն է:

Ազատորեն կատարվող ցանկացած գործընթաց կամ երևույթ, օրինակ արևադարձային անտառը, ընկերների խումբը կամ սեփական մարմինը, անարխիկ ներդաշնակություն է, որը գոյություն ունի անընդհատ փոփոխության շնորհիվ:

Հակառակ դրան, վերևից ներքև կառավարումը կարող է տեղի ունենալ միայն հարկադրաբար կամ բռնությամբ:

ԱՆԱՐԽԻԶՄԸ այն գաղափարն է, որ յուրաքանչյուր ոք ունի կատարյալ ինքնորոշման իրավունք: Ոչ մի օրենք, կառավարություն կամ որոշումների կայացման գործընթաց ավելի կարևոր չէ, քան մարդկանց կարիքներն ու ցանկությունները: Մարդիկ փոխադարձ համաձայնությամբ հարաբերություններ ձևավորելու համար պետք է ազատ լինեն:

Անարխիան դոգմա չէ: Այն մի համակարգ չէ, որն իբր թե կաշխատեր, եթե միայն ճիշտ կիրառվեր, ինչպես օրինակ՝ ժողովրդավարությանը, և ոչ էլ մի նպատակ է, որը պետք է իրականացնենք հեռավոր ապագայում, ինչպես կոմունիզմը: Դա գործելու և իրերին վերաբերվելու մի ձև է, որը կարող ենք կիրառել հենց հիմա:

Անդրադառնալով որևէ արժեքային համակարգի կամ գործողությունների հերթականության, կարող ենք սկսել, հարցնելով. «Ինչպե՞ս է բաշխված իշխանությունը»:

ԱՆԱՐԽԻՍՏՆԵՐԸ դեմ են ամեն տեսակի հիերարխիայի, ամեն գործիքի, որն իշխանությունը կենտրոնացնում է մի քանիսի ձեռքում, ամեն մեխանիզմի, որը օտարում է մեզանից մեր ներուժը: Ընդդիմանալով փակ համակարգերին՝ մենք վայելում ենք դրսի անհայտն ու ներսի քաոսը, որոնց շնորհիվ կարող ենք ազատ լինել:

Այս գիրքը ստեղծվել է CrimethInc. նախաձեռնության կողմից և թարգմանվել անգլերենից Ելք ունենք / fuck-them խմբի կողմից:

Անգլերեն տեքստի վրա աշխատել են մի խումբ մարդիկ, հինգ մայրքամաքներից: Մի շարք կամավորներ նվիրատվություն են արել տպագրության ծախսերը փակելու համար, որպեսզի դու կարողանաս բռնել այս գրքույկը քո ձեռքերում:
էլեկտրոնային տարբերակը կարելի է գտնել https://www.facebook.com/elkunenk/timeline կայքում:

Երբ գիտակցում ենք տարբեր հաստատությունների և գերիշխանության մեխանիզմների ընդհանրությունը, պարզ է դառնում, որ բոլորիս անհատական պայքարը դրանից մեծ մի բանի մաս է, որը կարող է միավորել մեզ: Երբ համախմբվում ենք, ամեն ինչ փոխվում է. ոչ միայն մեր պայքարը, այլև ուժի մեր գիտակցությունը, կենսուրախության կարողությունը, զգացողությունը, որ ապրելն իմաստ ունի: Իրար գտնելու համար պահանջվում է ընդամենը սկսել գործել այլ տրամաբանությամբ:

Ամեն ինչ փոխելու համար, սկսիր ինչ-որ բանից:

ՄԻ ԿԱՌՉԻՐ ՀԻՆ ԱՇԽԱՐՀԻՑ

facebook.com/elkunenk/

crimethinc.com